

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ**

ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ ՎՐՈՒՅՐԻ

**ՀՀ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ
1991-2001 թթ.**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական դեկանար՝

պատմական գիտությունների դռնտոր,
պրոֆեսոր Մինասյան Էդիկ Գարեգինի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դռնտոր,
պրոֆեսոր Մանուկյան Արմենակ Սարիբեկի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Զոհրաբյան Էդուարդ Լենդրուշի

Առաջատար կազմակերպություն՝

Խաչատոր Արովյանի անվան

Հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. դեկտեմբերի 26-ին, ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանրանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առարկած է 2023 թ. նոյեմբերի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: 1991 թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերազույն Խորհուրդը, Անկախության մասին Հռչակագրի հիմնարար դրույթների ու մարդու իրավունքների և ազգերի ազատ ինքնորշշման միջազգային իրավունքի իմալերատիկ նորմայի [*jus cogens*] սկզբունքների հիման վրա, հաստատագրեց հանրապետության ելքը ԽՍՀՄ-ի կազմից¹:

Խորհրդային Միության փլուզմամբ Հայաստանը վերաբեց ազգային նոր զարթոնք, սկսվեց արցախահայության ազատագրական պայքարի նոր վերելքը՝ մայր հարենիքի հետ վերամիավորվելու Լեռնային Ղարաբաղի հաստատակամ նպատակադրումով։ Կարծրատիպերի հաղթահարման այդ բարդ ու հակասական իրավիճակում էլ ներդրվեց ժողովրդավարական ինստիտուտների համակարգը։

Անկախության հռչակումից հետո անցած ժամանակաշրջանն էլ բավական է, որպեսզի համալիր-համադրական քննության ենթարկվի Հայաստանի երրորդ հանրապետության առաջին տասնամյակի փորձը հասարակական-քաղաքական զարգացումների ոլորտում, արժևորելով ձեռքբերումները և սայթաբումները։ Այդ հեղարկեկից պատմական ժամանակաշրջանի հիմնավոր հետազոտումը հոյից արդիական հնչեղություն։

ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐԸ: Ուսումնասիրության նպատակն է պատմաքննության ենթարկել ՀՀ հասարակական-քաղաքական կյանքը 1991-2001 թթ. ընդգրկող ժամանակահատվածում։

1. Ամբողջացնել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի ամբողջական նկարագիրը։

2. Հանգամանորեն քննել և արժևորել անկախության հռչակման գործընթացները և ժողովրդավարական համակարգի ներդրումը։

3. Բացահայտել քաղաքական նոր խնդիրները, օրյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի դժվարություններն ու սայթաբումները։

4. Հանգամանորեն ներկայացնել բազմակուսակցական համակարգի ստեղծումը, և այդ համակարգի առավելությունները սոցիալիստական փորձի բացաման առումով։

5. Պարզաբանել հանրապետության՝ նախագահական և խորհրդարանական համակարգերին անցման, Սահմանադրության ընդունման հանգամանքները։

6. Ներկայացնել հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների ազատականացման գործընթացների հիմքերը։

7. Քննության առնել առաջին տասնամյակում հասարակական-քաղաքական կյանքում տեղ գտած դրական և բացասական կողմերը։

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Աստենախոսության գիտական նորույթը նրանում է, որ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով փաստագրական, պատմագիտական գրականությունը, տարբեր նորահայտ վավերագիր, ամբողջական և համընդգրկուն համադրական պատմաքննության է ենթարկել անկախության հռչակմամբ պայմանավորված հասարակական-քաղաքական գործընթացների պատմափորձը։ Աշխատանքում նորույթի կարևորվել են անկախացման գործընթացներով

¹ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի 30-ամյակը։ Փաստաթղթերի ժողովածու։ Երևան, 2020, էջ 90։

պայմանավորված վերափոխումների ու վերաձևումների նշանակությունը բազմակու-սակցական ազատականության ձևավորման բնագավառում:

Նորովի և քննադատաբար արժենորվել է ՀՀ 1991-2001 թթ. հասարակական-քաղաքական կյանքի փորձը ներկայիս արդի մոտեցումների և հասարակական-քաղաքական զարգացման առաջարկով փորձի վերաիմաստավորման և համային վերաքննության իրատեսական արդի չափորոշիչների համաձայն: Ատենախոսությունում հստակ ցուց է տրվել, թե ինչպիսի պայմաններում անցում կատարվեց միակուսակցականից բազմակուսակցական ժողովրդավարական համակարգին: Կարևորագույն պատմափուլի հասարակական-քաղաքական գործընթացների նորովի արժենորումն է հենց հանդիսանում է աշխատանքի գիտական նորույթը:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտությունը գրված է համեմատական, պատմական-համադրական վերլուծության մեթոդով՝ նպատակադրում ունենալով անաշառորեն և անկողմնակալ պատմաքննել 1991-2001 թթ. պատմաընթացքն ու իրողությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԵՐԸ: Աշխատությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1991-2001 թվականները, տարածքային առումով՝ Հայաստանի Հանրապետությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Հետազոտության արդյուրագիտական բազայում առաջնային և կարևոր տեղ են ունեցել ՀՀ ազգային արիթմի փաստաթղթերը, մամուլի և այլ բնույթի հրապարակումները, արդի գրականությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ԼՇԱՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Աստենախոսությունն ունի կիրառական արժեք՝ հնարավորություն տալով պարզաբանել ՀՀ հասարակական-քաղաքական զարգացման կարևոր միտումները, դասեր քաղել արդի զարգացումների մեկնակետից, արդյունքները կիրառել հատուկ դասընթացներում և ԲՈՒՀ-երի մասնագիտական ամբիոնների ու դիվանագիտական-քաղաքական կառույցների գործառույթներում:

ԽՆԴՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ: Թեզի հենքը պատմաբանների և ժամանակակիցների աշխատությունները, հուշագրությունները, արիթմի փայլին և մամուլի նյութերն են:

Հետազոտությունում միանգամայն կարևորվել են Է. Մինասյանի հիմնարար բնույթի մենագրությունները, որոնցում արվել են դիտարժան զնահատումներ և պատմադասերի արժենորումներ²: Հ. Աբրահամյանի աշխատություններում³ լուսարանվել են հետազոտվող թեմայի առանձին կողմերը: Է. Պողոսյանի⁴ աշխատությունում չնայած ցեղասպանության

² Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, նոյեմբերի Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Երևան, ԵՊՀ հրատ., 2018, նոյեմբերի Մինասյան Է. Գ., Մայրաքաղաք Երևանը ՀՀ անկախության տարիներին (1991-2018 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2020, նոյեմբերի Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2003:

³ Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, նոյեմբերի Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ., Երևան, ԵՊՀ հրատ., 2011:

⁴ Տե՛ս Պողոսյան Է. Վ., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան, «Լուսարաց» հրատ., 2013:

սահմանադրականության հետ կապված վիճահարույցության խնդրին, կարևորվում է Անկախության հոչակման փաստը:

Իր ուրույն տեղն ունի Ա. Ղամբարյանի աշխատանքը⁵, որում այլ հարցերի հետ արթևորվում է Հայոց ցեղասպանության շուրջ առաջացած տարակարծությունների և քաղաքական ուժերի դիրքորոշման հարցը:

Աշ. Սարգսյանի աշխատությունը⁶ սուրբեկտիվ մոտեցումների և թվայցալ իրատեսական մեկնաբանությունների հետ միաժամանակ, պարունակում է որոշակի փաստական դիտարկելի նյուր:

Կուսակցությունների կազմավորման, միակուսակցական համակարգի կազմաքանդման և քազմակուսակցական համակարգի ձևավորման և այլ հարցերի մասին տեղեկանում ենք Գ. Քեռյանի⁷, Ռ. Միրզախանյանի⁸, Ս. Հովսեփյանի⁹, Գ. Պողոսյանի¹⁰, Հ. Տասնապետեանի¹¹, Լ. Խուրշուրյանի¹² գործերից, որոնցում իրարամերժ մեկնաբանությունների հետ կան օրիենտիվ գնահատումներ:

Հասարակական-քաղաքական կյանքում կուսակցությունների դերակատարման առումով կարևորվում է Ն. Հովսեփյանի 1991-2001 թթ. ընդգրկող, ՀՀ միջկուսակցական հարաբերությունների վերաբերյալ ատենախոսությունը¹³: Հետազոտմամբ կարևորվել է Հ. Կեսոյանի աշխատանքը¹⁴, որում վերհանվել են իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման հիմնախնդիրները՝ աչքի ընկնելով մեկնաբանությունների հիմնավորվածությամբ:

Արժևորվել են ժամանակաշրջանի քաղաքական-պետական մի շարք գործիչների գործերը: Դիտարժան են Կ. Շեմիրջյանի¹⁵ և Վ. Օսկանյանի¹⁶ աշխատանքները, չնայած Վ. Օսկանյանի աշխատանքը բովանդակային առումով կրում է սուրբետիվիզմի կնիքը: Լ. Տեր-

⁵ Տե՛ս Ղամբարյան Ա., Հայոց պետականության պահպանման սահմանադրահիրավական ուրիներք, Երևան, Տիգրան Մեծ, 2022:

⁶ Տե՛ս Սարգսյան Ա., Ղարաբաղյան շարժման պատմություն. 1988-1989, Երևան, Անտարես, 2018:

⁷ Քեռյան Գ., Քաղաքական կուսակցությունների տիպարանությունը, Երևան, Վան Արյան, 2002: Անյշի՝ Հայաստանի Երրորդ հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցություններ, Երևան, «Մշխիքար Գոշ», 1996:

⁸ Միրզախանյան Ռ., Հանգրվան, հողվածներ, ելույթներ, հարցազրոյցներ, Երևան, Տիգրան Մեծ, 2001:

⁹ Հովսեփյան Ս., ՀՀ ժողովրդի մեծ ողբերգությունը, Երևան, Հայաստան, 2002:

¹⁰ Պողոսյան Գ., Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Երևան, «Լուսաբաց», 2006:

¹¹ Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցությունը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողով (1890-1924), Արենք, Հայ կրթական մշակ. ընկերութիւն, 1988:

¹² Խուրշուրյան Լ. Ա., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ իրաւու, 1964:

¹³ Հովսեփյան Ն. Ա., «Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1991-2001 թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության Սեղմագիր, Երևան, 2018:

¹⁴ Կեսոյան Հ., Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Մենազրություն, Երևան, Հեղ. հրատ., 2018:

¹⁵ Շեմիրջյան Կ., Հիշատակ, Երևան, 2012:

¹⁶ Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով: Փոքր երկրի մեծ մարտահրավերները, նախարարի օրագրից, Երևան, 2013:

Պետրոսյանը¹⁷ և Ռ. Քոչարյանը¹⁸ հրապարակել են մի շարք աշխատանքներ, որոնք, իրենց սուբյեկտիվ կողմերով հանդերձ, լրցու են ափոռում տարբեր իրողությունների վրա:

Վ. Մանուկյանի աշխատանքները¹⁹ ևս, անկասկած, արժեքավոր են ՀՀՇ-ի ձևավորման և 1990-ական թթ. միջկուսակցական հարաբերությունների, հասարակական-քաղաքական զարգացումների մեկնարանմամբ՝ որոշակի սուբյեկտիվիզմով հանդերձ: Պ. Հայրիկյանի աշխատանքներում²⁰ ցույց է տրված ԱԻՄ-ի քաղաքական գործունեության ակունքները: Վ. Սիրաղեղյանի հոդվածների և ելույթների ժողովածուն²¹ ինքնատիպ է՝ կրելով հեղինակային մեկնաբանության կնիքը, չնայած վերջինիս առաջարկած մի շարք հարցեր կարիք ունեն վերաբժնորման:

Հ. Բագրատյանի աշխատանքներում²² հանդիպում են ժամանակաշրջանի վերլուծություններ՝ իրենց սուբյեկտիվ գնահատումներով հանդերձ:²³ Հրապարակումների մեջ իր տեղն է գրանցում 1990-1995 թթ. մի շարք ԱԺ ՀՀՇ թևի պատգամավորների, այլ քաղաքական գործիչների երկիրառությունների ժողովածուները, որոնք սուբյեկտիվ կողմերով հանդերձ՝ հասարակական-քաղաքական կյանքի ամբողջացման առումով արժեքավոր են²⁴: Տեղորոշյանի հետազոտության²⁵ առանցքը հետխորհրդային հասարակական կյանքի տրանսֆորմացիայի, բազմակուսակցական համակարգի անցման օրինաչափությունների հարցերն են: Կարևորվել է ՀՀ անկախության և լիբերալ

¹⁷ Տեր-Պետրոսյան Լ., Ընտրական ծրագիր, Երևան, 1996, նույնի՝ «Պատերազմ, թե՝ խաղաղություն. Լրջանալու պահը». 1 նոյեմբերի, 1997 թ., Երևան, 2001, նույնի՝ Ապազան բախում է դրութ, Երևան, 2002, նույնի՝ Ընտրական. Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Երևան, 2006, նույնի՝ «Վերապարձ: Ելույթներ, հոդվածներ, մամլո ասուլիսներ», Երևան, 2009, նույնի՝ Հայ-թուրքական հարաբերություններ, Երևան, 2009, նույնի՝ Հայոց ցեղասպանությունը, հայաց պետականության դիտակտից, Երևան, 2015: <https://www.aniarc.am/2017/11/01/levon-ter-petrosyan-article-war-or-peace-1997/>:

¹⁸ Քոչարյան Ռ., Կյանք և ազատություն: Հայաստանի և Ղարաբաղի էրս-նախազահի ինքնակենսագրությունը, Երևան, Հեղ. հրատ., 2019:

¹⁹ Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակություն, Երևան, «Վ. Ի. Վ. Այսօր և վաղը», 2002, նույնի՝ Գնացքից թոշելու ժամանակն է. Հոդվածների ժողովածու, Երևան, 2002, Հարցազրույց ՀՀ վարչապետ Վ. Մանուկյանի հետ՝ 27.03.2020 թ.:

²⁰ Հայրիկյան Պ., Անվանության ճանապարհի երեք վավերագրեր (իմ բանտարյին յուշերից), Երևան, ԱԻՄ հրատ., 1997, նույնի՝ Մեպտեմբեր 1996 թվական, Երեւան, «ԱԻՄ» հրատարակչ., 1997:

²¹ Սիրաղեղյան Վ., Երկիր ցափանց, Երևան, 2011: նույնի՝ Հայկական երազանքը գոյատևման փակություն (Ելույթների և հոդվածների ժողովածու), Երևան, 2002

²² Բագրատյան Հ., Հայաստանում արևա քաղաքական ու տցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Երևան, 2000,

²³ ՀՀ վարչապետ (1993-1996 թթ.), ՀՀ ԱԺ 5-րդ գումարման պատգամավոր, Հրանտ Բագրատյանի հետ հարցազրույցները, որոնք անցկացվել են Վ. Սիրունյանի կողմից՝ 07.03.2020 թ., 12.04.2020 թ.:

²⁴ Հայաստանի Հանրապետության անվախությունը և ազատական բարեփոխումները, Մաս 1, Երևան, Անտարես, 2020, Հայաստանի Հանրապետության անվախությունը և ազատական բարեփոխումները: Մաս 2, Երևան, Անտարես, 2021:

²⁵ Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, «Գիտություն» հրատ., 2006: նույնի՝ Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա. ԻԳ. 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, Երևանի պետական համալսարան, 2006, նույնի՝ Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների կուսակցությունների ինստիտուցիոնալացման ընթացքը և վիճակը. Ուկրաինայի եվ Վրաստանի դեպքեր, Երևան, «Լույս», 23 օգոստոսի, 2022:

բարեփոխումների մասին հոդվածների ժողովածուն՝ անգլերէն լեզվով²⁶: ՀՀ-ական խմբակցության անդամ Ա. Ուսկանյանի աշխատանքում²⁷ ուրվագծվել են ՀՀ-ն դեպի Եվրոպա տանող ուղիները:

Սահմանադրական գործընթացի արմենում մասին է Հ. Խաչատրյանի գիրքը²⁸: Չի կարելի շրջանցել Վլ. Նազարյանի աշխատանքը²⁹, որը նվիրված է ՀՀ Սահմանադրության կոնցեպցիային:

Վ. Փիլիպոսյանի աշխատանքը³⁰ անկախության առաջին երեք տարիների հասարակական-քաղաքական կյանքի սահմանավորման մասին է: Դիտարժան է Բերկլիի համալսարանից Ստ. Աստուրյանի վերլուծականը՝ Լ. Տեր-Դետրոյանից մինչև Ռ. Քոչարյանի ժամանակաշրջանը³¹: Լեռնային Ղարաբաղի բարդ գործընթացների մասին են Թումաս դե Վասիլ աշխատանքները³²: Խնդնատիպ վերլուծություն կա Ա. Առաքելյանի և Գ. Նորիսայի³³, ինչպես նաև Զ. Զարիֆյանի մոտ³⁴:

Օգտագործվել է նաև հարցազրույցների ձևաչափը, որ անցկացվել են Վ. Մանուկյանի, Հ. Բագրատյանի և Ա. Մանուկյանի հետ³⁵:

Ուսումնասիրությունում կարենրվել է նաև ժամանակի մամուլը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՇՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ: Ասենախոսությունը քննրկվել և հավանության է արժանացել ԵՊՀ Հայոց պատմության

²⁶ Տէ՛ս Independence of the Republic of Armenia and Liberal Reforms, Compiled by Aram Manukyan, Yerevan, Antares, 2021:

²⁷ Տէ՛ս Ուսկանյան Ա. Վ., Հայաստանը Եվրոպայի ճանապարհին: «Խնդնություն 2» = Armenia on the way to Europe: "Identitas" 2 / Խմբագիր՝ Ա. Ուսկանյան; ՀՀ արտաքին գործերի նախարարության, Ֆրիդրիխ Էրերտ հիմնարքամի, Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի (ՀՀՀԿ) համատեղ հրատարակությամբ. Երևան, Անտառես, 2005:

²⁸ Խաչատրյան Հ., Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, Երևան, «Գիտություն», 1997:

²⁹ Նազարյան Վլ., Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, Երևան, Գոշ, 1992:

³⁰ Փիլիպոսյան Վ., Ժողովրդավարական, քաղաքական համակարգի ձևափորումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, ԵՊՀ հրատ., 1994:

³¹ Stephan H. Astourian, From Ter-Petrosian to Kocharian: Leadership change in Armenia, Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies Working Paper Series, UC Berkeley Recent Work, Winter 2000-2001:

³² Thomas De Waal, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, New York and London, New York University Press, 2003, Томас де Ваал, Конфликт вокруг Нагорного Карабаха: истоки, динамика и распространенные заблуждения. Демонстрация в Ереване, 1988. Источник: Рубен Мангасарян/Паткер// Accord 17, р. 12-17: https://rc-services-assets.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/Accord17_p12_Nagorno_Karabakh_conflict.pdf. Դիտման օրը՝ 06.02.2023 թ.

³³ Arakelian A., Nodia G., Constitutional/Political reform process in Georgia, in Armenia and Azerbaijan: Political Elite and voices of the people, Tbilisi, Georgia, International Institute for Democracy and Electoral Assistance, Caucasus Institute for Peace, Democracy and Development, 2005, p. 109-129.

³⁴ Zarifian J., U.S. Foreign Policy in the 1990s and 2000s, and the Case of the South Caucasus (Armenia, Azerbaijan, Georgia)// European journal of American studies, 10-2, 2015, p. 1-17.

³⁵ ՀՀ վարչապետ (1993-1996 թթ.), ՀՀ Աժ 5-րդ գումարման պատգամավոր Հրանտ Բագրատյանի հետ հարցազրույցները, որոնք անցկացվել են Վ. Սիմոնյանի կողմից՝ 07.03.2020 թ.:

ՀՀ Գերազույն խորհրդի, ՀՀ Աժ 5-րդ պատգամավոր, ՀՀ կուսակցության վարչության նախագահ և «Հայ Ազգային կոնգրես» կուսակցության վարչության փոխնախագահ Արամ Մանուկյանի հետ հարցազրույցները, որոնք անցկացվել են Վ. Սիմոնյանի կողմից՝ 20.03.2020 թ. Հարցազրույց ԱԺՄ կուսակցության նախագահ, ՀՀ առաջին վարչապետ Վազգեն Մանուկյանի հետ, 2020 թ. մարտ:

ամբիոնի նիստում: Հիմնական դրույթները ներկայացվել են ատենախոսի հեղինակած հոդվածներում:

ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Այն բաղկացած է ներածությունից, 2 զիմից (7 ենթագոլուխներից), վերջաբանից, աղյուրների և գրականության ցանկից: Թեզի ծավալը կազմում է 214 էջ (առանց մատենագրության):

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նշված են ժամանակագրական շրջանակները, գիտական նորույթը, օգտագործված արխիվային ու այլ սկզբնադրյուրները, առկա գրականության պատմահամարրական վերլուծությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «ՀԱՍՏԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1991-1996 թ»: բաղկացած է 4 ենթագլուխից:

Առաջին ենթագլուխ ներկայացված է ՀՀ անկախության հռչակագիրը՝ իրու ինքնիշխանության, անկախացման և ժողովրդավարության գործընթացի սկիզբ՝ շաղկապված Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հետ, որը նորագույն պատմափուլի մեծագույն շրջադարձի ժամանակաշրջան էր «առնվազն մեկուկես դարի հայոց պատմության մեջ»³⁶: Հետխորհրդային տրանսֆորմացիայի առաջին փուլը բնութագրվեց ազատականացմամբ, հասարակության մեծագույն մասի համար ընդունելի խորհրդանարական մեխանիզմների, բազմակուսակցական համակարգի ձևավորմամբ: Ամենակարևոր քայլը կարելի է համարել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունած Անկախության հռչակագիրը³⁷:

1985 թ. մարտին ԽՄԿԿ գլխավոր քարտուղար ընտրված Ս. Գորբաչովը երկիրը ճգնաժամային վիճակից դուրս բերելու նպատակով փորձեց վերակառուցել երկրի տնտեսությունը, մտցնել ժողովրդավարության տարրերը³⁸: «Վերակառուցման» անվան ներքո իրականացվող մասնակի, ոչ արմատական փոփոխությունները հանգեցրին ճգնաժամը խորացնող բարդ ու հակասական նոր գործընթացների: Մրցեցին հակասությունները կենտրոնի և ազգային հանրապետությունների միջև³⁹:

Ըստ Ս. Մարգարյանի, «ԽՍՀՄ քաղաքական համակարգին առաջադրված այս պահանջին գերազույն քաղաքական ղեկավարության կողմից ոչ հավասարարժեք վերաբերմունքի ցուցաբերման հետևանքով Հայոց համազգային շարժման օրակարգային խնդիրների կիզակետ դարձավ ՀՀ անկախության հարցի առաջադրումը»⁴⁰:

«Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը շարունակեց 1918 թ. մայիսի 28-ին հռչակված անկախ Հայաստանի Հանրապետության ավանդույթները⁴¹: Գերագույն խորհրդի օգոստոսի 6-ի որոշմամբ էլ ձևավորվել էր Անկախության հռչակագրից բխող սահմանադրական փոփոխություններ մշակող հատուկ աշխատանքային հանձնաժողով⁴², որը պետք է համակարգեր այդ ուղղությամբ տարվող աշխատանքները:

³⁶ Սարգսյան Ա., Ղարաբաղյան շարժման պատմություն. 1988-1989, էջ 6:

³⁷ «Խորհրդային Հայաստան», N 194, 25 օգոստոսի, 1990 թ.:

³⁸ Տե՛ս Սահմանադրության մասին Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն: Համառոտ ակնարկ, Երևան, ՀԳԱ, 1992, էջ 7:

³⁹ Տե՛ս նոյն տեղում, էջ 8-9:

⁴⁰ Տե՛ս Մարգարյան Ս., Պատմականությունը՝ որպես պետության ինքնիշխանության արդիականացման քաղաքիչ// «ՎԷՄ» համահայկական հանդես, 2018, 2 (62), էջ 18:

⁴¹ «ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», N 15, 23 օգոստոսի, 1990 թ., էջ 11-12:

⁴² «Խորհրդային Հայաստան», N 180-181, 8-9 օգոստոսի, 1990 թ.:

Գերագույն խորհրդի հանձնաժողովի քննարկմանը հռչակագրի իրենց նախագծերն էին ներկայացրել տարբեր ուժեր՝ ՀԿԿ Կենտկոմը, «Սահմանադրական իրավունք» միության խորհուրդը, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը և մի շարք այլ քաղաքական կազմակերպություններ՝ սկզբունքային տարակարծություններով հանդերձ, շահագրգիռ և թեժ քննության ենթարկելով այդ կարևոր, անկախացման գործընթացների մեջնակետից հիմնաքարային նշանակություն ունեցող հիմնախնդիրը:

Ծոչակագրի ամենամեծ սկզբունքային տարակարծության առարկան Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջի ամրագրման հարցն էր: ՀՀ-ն ներկայացուցիչներ՝ Լ. Տեր-Պետրոսյանի զյանավորությամբ, դեմ արտահայտվեցին հռչակագրում ցեղասպանության հարցի արձարձմանը⁴³: Պատգամավորներ Ա. Նավասարդյանը, Ի. Մուրադյանը, Զ. Բարուխանյանը, Ռ. Համբարձումյանը և ուրիշներ՝ պատմաբան Հր. Սիմոնյանի դեկապարտությամբ պահանջեցին բացառիկ պատմական նշանակության այդ փաստարդում անպայման ամրագրել ցեղասպանության փաստը⁴⁴: **1990 թ.օգոստոսի 21-ին, Հայոց ցեղասպանության մասին դրույթ պաշտոնապես առաջարկել էր Անկախության հռչակագիրը մշակող հանձնաժողովի անդամ Ս. Գարրիեյանը»⁴⁵:** Ի վերջո, Հայոց ցեղասպանության մասին դրույթը փոփոխված տարբերակով՝ 11-րդ կետով ամրագրվեց. «Հայաստանի Հանրապետությունը սատոր է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքական և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»⁴⁶, որը 1998 թ. իշխանակիությունից հետո ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություն դարձավ:

Կատարվածը ամենաին էլ չագրեց ՀՀ ընդիհանուր հայեցակարգի հետազա եվոլյուցիայի վրա⁴⁷, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը երկրորդ պլան մրկեց, այն ուղղակի արտահայտվեց ՀՀ առաջին նախագահը՝ Լ. Տեր-Պետրոսյանի 1990 թ. սեպտեմբերի 30-ի Լու Անշելեսի ելույթում⁴⁸: 1990-1995 թթ. ՀՀ ԳԽ պատգամավոր, պատմաբան Ա. Սարգսյանը ափսոսանք արտահայտեց, որ **հնարավոր չեղավ լիակատար արմառափիլ անել հայուստականություն-պահանջատիրությունը որպես հակապետական մի երևույթը**⁴⁹:

⁴³ Ուսկանյան Ա., Հայոց Համազգային շարժումը որպես լրասավորության քաղաքական փուլ// Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազատական բարեփոխումները: Մաս 2, էջ 53:

⁴⁴ Տէ՛ս «Խորհրդային Հայաստան», 21 օգոստոսի, 1990:

⁴⁵ Տէ՛ս Ղամբարյան Ա., Հայոց պետականության պահպանման սահմանադրաբարավական ուղիները, էջ 46:

⁴⁶ Տէ՛ս <https://www.gov.am/am/independence/>: Տէ՛ս նաև Ղամբարյան Ա., Հայաստանի անկախության մասին հռչակագիրը. Պետականապահպանության անանց երաշխիք, էջ 6, 12: <file:///C:/Users/aserv/Downloads/64468210.pdf>:

⁴⁷ Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման և զարգացման գործընթացը Հայաստանում (1990-1991 թթ.), Սեղմագիր, պատմ. գիտ. դոկտոր, Երևան, 2015, էջ 19:

⁴⁸ Տէ՛ս Հակոբյան Թ., Արցախյան օրագիր. Կանաչ ու սև, Երևան, 2008, էջ 101: «Լեռնային Ղարաբաղ», Ն 211, 7 հոկտեմբերի, 1990 թ.:

⁴⁹ Սարգսյան Ա., Քաջմակուսակցական համակարգի հաստատումը// Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազատական բարեփոխումները: Մաս 2, էջ 189:

Էդ. Մինասյանի եզրահանգմամբ, հոչակագիրն անկախացման գործընթացի իրավաբանական հիմնավորումն ու ուղեցույցն էր⁵⁰: Ա. Մանուկյանի արձանագրմամբ, սույն Հռչակագրի ընդունումը եղավ քաղաքական ուժերի դժվարին փոխզիջման արդյունք⁵¹: Սակայն Է. Պողոսյանը այդ գործընթացը համարեց որպես «**հուզական, ոչ գիտական և չայսատանի համար ոչ շահելեկան»⁵²:**

ՀՀ ԳԽ 1992 թ. մարտի 25-ին կայացած հերթական նիստի որոշմամբ, որպես ՀՀ պետական զինանշան ընդունվեց 1920 թ. հովհաննելի հաստատված Հայաստանի առաջին հանրապետության հերալդիկան⁵³, որը նաև աներկբա փաստեց պետականաշխնության գործընթացում ժառանգործության մասին:

Հայաստանը Մերձավայրական հանրապետությունների, Վրաստանի և Մոլդովայի հետ միասին շմասնակցեց կենտրոնի նախաձեռնությամբ ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ին անցկացված համամիութենական հանրաքվեին՝ այն որակելով որպես ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին հակասող⁵⁴: Դա իրավես նշանակում էր անցում նոր կարգավիճակի, որով անցում էր կատարվում Երրորդ հանրապետության շրջադարձային զարգացման նոր փուլին և նոր առաջնահերթություններին բոլոր ոլորտներում:

Երրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվել Երրորդ Հանրապետության հոչակմանը և իշխանության նոր համակարգի ձևավորմանը, 1991 թ. հունվարի 16-ի ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Միության պահպանման վերաբերյալ հանրաքվե անցկացնելու անհաջող փորձին, իսկ «Ճակատագրական շրջադարձ» տեղի ունեցավ Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) հիմնադիր 1-ին համագումարում: ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. մարտի 1-ին որոշեց սեպտեմբերի 21-ին անցկացնել համաժողովրդական հանրաքվե՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախանալու վերաբերյալ⁵⁵: 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն ապացուցեց դա թե՝ արդյունքի, թե՝ համազգային ոգևորության, թե՝ գործընթացի նպատակադրվածության առումով⁵⁶: 1991 թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ ԳԽ-ի հաստուկ նիստը նվիրվեց անկախության հանրաքվեի արդյունքների հաստատմանը. կայացվեց պատմական որոշում, որն ի լուր աշխարհի ընթացքց Արամ Մանուկյանը⁵⁷, որը հարգանքի արժանի տուրք էր Հայաստանի Հանրապետության հանրապետական զարգացման ուսանելի ավանդույթներին:

⁵⁰ Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի Անկախի հանրապետության քսանինգամյա ուղին // Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2017, էջ 19:

⁵¹ Մանուկյան Ա., Բարեկինուսմների իրավական և քաղաքական հիմքերը, Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազատական բարեկինուսմները, Մաս 1, էջ 10:

⁵² Պողոսյան Է. Վ., նշվ. աշխ., էջ 42:

⁵³ «ՀՀ Գերագույն Խորհրդի տեղեկագիր», N 8, 30 ապրիլի, 1992 թ., էջ 3:

⁵⁴ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», N 2, 31 հունվարի, 1991 թ., էջ 52:

⁵⁵ «Հայաստանի Հանրապետություն», N 202-203, 24 սեպտեմբերի, 1991 թ.:

⁵⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ, փաստաթղթերի ժողովածու, կազմովներ՝ Բարեկեն Արարքյան, Աշոտ Սարգսյան, Գոհար Խաչատրյան, Երևան, «Արմատ» ժողավրդավարության և քաղաքացիական հասարկության զարգացման կենտրոն, 2016, էջ 63:

⁵⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ, էջ 85-89:

ՀՀ իշխանության նոր մարմինների ձևավորման գործընթացի սկիզբը փաստացի դրվել էր 1990 թ. մայիսի 20-ի խորհրդարանական ընտրություններում⁵⁸, որով անցում կատարվեց խորհրդարանական հանրապետության, Լ. Տեր-Պետրոսյանն ընտրվեց Գերագոյն խորհրդի նախագահ»⁵⁹. 1990 թ. օգոստոսի 24-ին ընդունվեց ՀՀ պետական դրոշի մասին օրենքը, որով հայտարարվեց, որ «այսուհետ ՀՀ դրոշը եռագույնն է»: ՀՀ Գերագոյն խորհուրդը 1991 թ. հունիսի 25-ին որոշեց հիմնել ՀՀ նախագահի պաշտոն⁶⁰, որը բխում էր 1990 թ. օգոստոսի 23-ի հրչակագրից⁶¹: 1991 թ. հոկտեմբերի 16-ին առաջին անգամ անցկացվեցին նախագահական այլընտրանքային ընտրություններ, ՀՀ առաջին նախագահ դարձավ Լ. Տեր-Պետրոսյանը՝ 83.02% առավելությամբ, որի արդյունքները չվիճարկվեցին, թերևս բացառությամբ ԱԲՄ դեկավար Դ. Զայրիկյանի, ինչն առանձնապես լուրջ հիմքեր չուներ:

Երրորդ ենթագլուխում լուսաբանված է ժողովրդավարացման գործընթացը և բազմակուսակցական համակարգի ստեղծումը: 1989 թ. իշխող ուժի՝ ՀՀ-ի ընդունած ծրագրում հստակ արձանագրվեց ժողովրդավարության, միակուսակցական համակարգի բազմակուսակցականին անցման վճռականությունը⁶², որի սկզբնափուլում նկատելի էր երկրներ քաղաքական համակարգ ստեղծելու միտում⁶³: Տեղորոշումի կարծիքով, 1990-ական թթ. Հայաստանում կուսակցական համակարգը մեկ գերիշխող կուսակցությունով էր, իսկ մյուս կուսակցությունները, հիմնականում, կլինտելիստական (հաճախորդային) դերակատարություն ունեին⁶⁴:

Ժողովրդավարացման համար թեկումնային 1990 թ. մայիսին ձևավորված խորհրդարանում մեծամասնություն կազմեցին ՀՀ ներկայացուցիչները⁶⁵: Նոյեմբերի 5-ին ՀՀ Գերագոյն խորհրդի որոշումը ՀՀ պետական մարմինների և ձեռնարկությունների, հիմնարկների, ուսումնական հաստատությունների, գինվորական ստորաբաժանումների ապաքաղաքականացման⁶⁶ մասին դարձավ ժողովրդավարության հաստատման հիմնայուններից մեկը, որին հաջորդեց 1991 թ. փետրվարի 26-ին ընդունած «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը, որով դրվեց սոցիալիստական-միակուսակցականից բազմակուսակցական համակարգի անցման իրավահիմքը⁶⁷, որը հաջորդվեց մայիսի 17-ի «Հայաստանի կոմոնիստական կուսակցության և նախկին

⁵⁸ «Խորհրդային Հայաստան», N 106, 22 մայիսի, 1990 թ.:

⁵⁹ Մանուկյան Ա., Քարեփիտումների իրավական և քաղաքական հիմքերը, Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազատական քարեփիտումները, Մաս 1, Էջ 9:

⁶⁰ «Հայաստանի Հանրապետություն», 26 հունիսի, 1991 թ.:

⁶¹ Նոյեն տեղում, 10 օգոստոսի, 1991 թ.:

⁶² Սարգսյան Ա., Հայաստանի անկախության վերականգնումը, 1990-1991, Երևան, «Անտարես», 2020, էջ 484:

⁶³ Տէ քենյան Գ., Քաղաքական կուսակցությունների տիպարանությունը, Էջ 252:

⁶⁴ Թորոսյան Տ., Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների կուսակցությունների ինստիտուցիոնալացման ընթացքը և վիճակը. Ուկրաինայի և Վրաստանի դեպքեր, Երևան, «Լույս», 23 օգոստոսի, 2022 թ., Էջ 15:

⁶⁵ Տէ ս Մարգարյան Ա., Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Պետական ծառայություն», 2006, Էջ 300:

⁶⁶ «Հայաստանի Հանրապետության Գերագոյն խորհրդի տեղեկագիր», N 21, 15 նոյեմբերի, 1990 թ., Էջ 7-8:

⁶⁷ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, Էջ 115-118:

Հայաստանի Լենինյան կոմունիստական երիտասարդական միության ունեցվածքը ազգայնացնելու մասին» որոշմամբ⁶⁸, որով մի կարևոր քայլ ձեռնարկվեց կոմունիստական մենատիրությունից մնացած բացասական ճառանգության հաղթահարման գործում:

Իշխանության գալով, ՀՀ-ն Արցախի խնդրում փոխակերպեց որդեգրած իր դիրքորոշումը և հրաժարվեց նախնական փուլի իր արմատականությունից, կարծելով, որ պետք է կարևորել ազգերի ինքնորոշման միջազգային դրույթը⁶⁹: Հետխորհրդային Հայաստանի առաջին բազմակուսակցական խորհրդարանում ամենամեծ կուսակցական խումբը ՀՀ-ն էր, նրան հաջորդում էին Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀԴԴ), Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ) և Հայաստանի ռամկավարագութական կուսակցությունը (ՀՌԱԿԿ)⁷⁰: Ըստիմադիր կուսակցությունները (ՀԴԴ, ՀՌԱԿԿ, ԱԺՄ, ՀԿԿ, ՀԿԿ և այլն) չկարողացան միավորվել և վճռական ուժ դառնալ: Փաստորեն, Հայաստանում 1995 թ. բացարձակ գերիշխանություն ստացավ «իշխանության կուսակցությունը»⁷¹:

1995 թ. խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին խախտումների, անարդարության մթնոլորտում⁷²:

Զորքորդ ենթազիստ լուսաբանվել են ՀՀ հասարակական-քաղաքական կյանքի բարեփոխումները, ՀՀ Սահմանադրության ընդունումը և 1996 թ. նախազահական ընտրությունները:

Քննադատների ուշադրությունը հիմնականում սևեռվեց նախազահի կարգավիճակի թերությունների վրա⁷³: Հ. Կեսյանի հիմնավորմամբ, նախազահի լիազորությունը՝ իր հայեցողությամբ ցանկացած ժամանակ արձակել Ազգային ժողովը, խարարում էր պառլամենտի գործունեության կայունությունը⁷⁴:

1994 թ. հունիսի 30-ից մինչև 1995 թ. ապրիլի 13-ը Սահմանադրության «Պաշտոնական» նախագիծը լրամշակվեց և ներկայացվեց ՀՀ Գերազույն խորհրդի քննարկմանը: 1995 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցան Սահմանադրության քվեարկությունը և խորհրդարանի պատգամավորների ընտրությունը, որոնք 18 երկրների դիտորդների մեծամասնության համոզմամբ, անցան օրենքի աննախադեպ խախտումների, անարդարության ու բռնությունների մթնոլորտում⁷⁵:

1996 թ. նախազահական ընտրություններն անցան ակտիվ պայքարի, դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ուղիների որոնման շուրջ սուր բախումների պայմաններում, որն ի վերջո հանգեցրեց կառավարող ՀՀ կուսակցության դիրքերի

⁶⁸ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», N 8, 30 ապրիլի, 1991 թ., էջ 6-7:

⁶⁹Տեր-Պետրոսյան Լ., «Ըստրանի», էջ 380:

⁷⁰Տես Մորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, էջ 149:

⁷¹Տես Մորոսյան Տ., նշվ. աշխ., էջ 153-154:

⁷²Տես ՀՀԱ, ֆ. 1679, գ. 2, գ. 25, թ. 3-4:

⁷³Տես Ստեփանյան Վ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը և դրանով ամրագրված կանոնադրական կառավարման ձևի առանձնահատկությունները// Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազգական բարեփոխումները: Մաս 2, էջ 75:

⁷⁴ Կեսյան Հ. Ա., նշվ. աշխ., էջ 103:

⁷⁵ Գերագույն խորհրդի մամուլի կենտրոնի հաղորդագրությունը «ՀՀ ԳԽ նստաշրջանում», «Հայաստանի Հանրապետություն», 16 հունիսի, 1994:

խարիմանը և քաղաքական դաշտի վերաձևմանը⁷⁶: Լ. Տեր-Պետրոսյանը շարունակեց առժամանակ մենալ դրության տերը, սակայն սեպտեմբերի 26-ին նա հրապարակելով «Պատերազմ, թէ՝ խաղաղություն» աղմկահարուց հոդվածը, փորձեց նշանակել նոր առաջնահերթություններ արտաքին ռազմավարությունում, որ «պատերազմը պետք է քացանվի, ուստի և Ղարաբաղի հարցը պետք է լուծվի միայն ու միայն խաղաղ բանակցությունների միջոցով», «փոխիշումով»⁷⁷, ինչը սրեց հասարակական-քաղաքական իրավիճակը:

Է. Մինասյանի եզրահանգմամբ, 1996 թ. ընտրությունները դարձան 1995 թ. կայացած ԱԺ-ի ընտրությունների ընթացքում կատարված կեղծիքների և բռնությունների շարունակությունը⁷⁸, որին հաջորդեցին միտինգներն ու ելույթները՝ ընտրությունների արդյունքների վերանայման պահանջով⁷⁹: Իշխանություններն էլ այս ամենը որակելով իրու հեղաշրջման փորձ, փորձեցին ուժային մեթոդներով իրադրությունը ինչ-որ կերպ հանդարտացնել, որոնք արդյունավետ չեղան:

ԵՐԿՐՈՇԴ ԳԼՈՒԽԸ՝ «Հ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1996-2001 ԹԹ.»
բաղկացած է 3 ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը ներկայացված է հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեությունը:

Բազմակուսակցական համակարգի իրավական ամրագրմանը նախորդել էր դրա փաստացի ձևավորումը⁸⁰: 1991 թ. ՀՀ-ում գործում էին 226, 1993 թ. ամռանը կային 32 կուսակցություններ և հասարակական-քաղաքական միավորումներ, 431 հասարակական կազմակերպություններ⁸¹, 1998 թ. արդեն 70 միավորումներ, ինչպես նաև տարբեր ոլորտների (մարդասիրական օգնություն, մշակույթ, գիտություն, կրթություն և այլն) 2579 հասարակական կազմակերպություններ: 1991-1995 թթ. գրանցվել էին 50 կուսակցություններ (1992 թ.՝ 8 կուսակցություն, 1993 թ.՝ 4, 1994 թ.՝ 11, 1995 թ.՝ 7)⁸², ինչն էլ փաստում էր շրջադարձային բնույթի երևույթների մասին հասարակական-քաղաքական կյանքում:

Դրական տեղաշարժերի հետ մեկտեղ, տեղ գտան այնպիսի անցանկալի երևույթներ, ինչպիսիք են կոնյուկտուրային նկատառումները ու հարմարվողականությունը, իսկ արդեն 1990-ական թթ. ձևավորվեցին ազ և ձախ թերման կուսակցություններ համապատասխանաբար ներկայացնելով իշխանությանը և ընդդիմությանը: 1999 թ. ընտրություններից հետո ըստ երթյան կուսակցությունների համար ընդունելի եղան ձևավորումը ոչ թէ կայուն գաղափարական, այլ իրավիճակային նպատակահարմարության հենքի վրա, տուրք տալով եսասիրական-խմբակային հավակնություններին, որի հետևանքով կենտրոնական և ձախ ուժերը ՀՀ խորհրդարանից դուրս

⁷⁶ <https://www.aniarc.am/2016/07/05/1995-parliamentary-elections-hhsh-list/>:

⁷⁷ Տեր-Պետրոսյան Լ., «Պատերազմ, թէ՝ խաղաղություն. լրջանալու պահը». 1 նոյեմբերի, 1997 թ., <https://www.aniarc.am/2017/11/01/levon-ter-petrosyan-article-war-or-peace-1997>:

⁷⁸ Տէ՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=4346>:

⁷⁹ «Հայաստանի Հանրապետություն», N 81, 27 ապրիլի, 1996 թ.:

⁸⁰ «Հայաստանի Հանրապետության կուսակցություններ», Տեղեկագիր, 2007, Երևան, 2007, էջ 20, 30, 45, 174:

⁸¹ «Հայաստանի Հանրապետություն», N 119, 17 հունիսի, 1993 թ.:

⁸² Մարդկային զարգացման ազգային գեկույց, Հայաստան 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001, էջ 46:

մղեցին աջ լիբերալ ուժերին, զգալի չափով խախտելով քաղաքական դաշտի հավասարակշռությունը, ինչը նախադեպ ստեղծեց ապագա ընտրազործության էրում ձևախեղումների և բացասական գործնքացների դրսերման համար:

Երկրորդ ենթազիմում անդրադարձ է կատարվել ՀՀ քաղաքական գննաժամկետ խորացմանը և 1998 թ. իշխանափոխությանը, ՀՀ 1-ին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականին:

Այդ ընթացքում ՀՀ դիրքերը Ղարաբաղյան բանակցություններում թուլացան՝ զրկելով երկիրը «Կովկասում ժողովրդավարության և կայունության կղզյակի» համբավից⁸³, իսկ հետքաջաց գննաժամային գործնքացները ի վերջո 1998 թ. փետրվարի 3-ին հանգեցրեցին Լ. Տեր-Պետրոսյանի անխոսափելի դարձած հրաժարականին⁸⁴, որի մասին նա հայտարարեց ՀՀ անվտանգության խորհրդի հունվարի 8-ի նիստում, ընդգծելով, թե թերևս Ղարաբաղի հարցի նպաստավոր լուծման և Հայաստանի բարգավաճման վերջին պատեհությունն են կորցնում⁸⁵: Վ. Սարգսյանը հրապարակավ հայտարարեց այդ դիրքորոշման հետ իր կտրուկ անհամաձայնության մասին: Բերկիի համալսարանից Ստ. Աստուրյանի գնահատմամբ, Լ. Տեր-Պետրոսյանի քաղաքականությունը շեղվեց իր իսկ խոստումներից, որ արվել էին նրա իշխանության պոպուլիստական վերելքի ժամանակ, ավելացրած այն կարևորագույն հանգամանքը, որ Վ. Սարգսյանը իսպատ բացառեց Ղարաբաղի հարցի կարգավորման որևիցեւ տարբերակ, որով Ղարաբաղը ուղղահայացորեն կենքարկվեր Աղրթեցանին, և այդ առումով 1998 թ. հունվարը շրջադարձային էր խնդրի փուլային լուծման և կոչտ ռազմավարության կողմնակիցների միջն⁸⁶, ինչն էլ էապես կանխորոշեց ՀՀ հասարակական-քաղաքական գարգացումների հետագա ընթացքը՝ իր դրական և բացասական շերտանստվածքներով հանդեմ:

Երրորդ ենթազիմում վերլուծվել են հասարակական-քաղաքական նոր զարգացումները 1998-2001 թթ., որի սկիզբը նշանափորվեց քաղաքական ազատությունների մասնակի, ոչ լիարժեք վերականգնմամբ: Ռ. Քոչարյանի առաջին քայլերը փաստեցին ազգային համաձայնության հասնելու յուրովի ծրագրի մասին, որն իր մեջ ներառեց ուժային մեթոդների մի ողջ փաթեթ, և ըստ որոշ քաղաքագետների, եթե առաջին նախագահը ջանում էր ջլատել ընդդիմությունը Ճնշումների «մտրակով», ապա երկրորդ նախագահը թուլացնում էր ընդդիմության որպես ժողովրդավարական հակակշռի դերը, ինչը հետաքյայում անցանկալի արդյունքների հանգեցրեց, առաջ բերեց աննախադեպ ցնցումներ հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում, առաջ բերելով նաև հակընդդեմ գործողություններ, որոնք ՀՀ-ն կանգնեցրին տարբեր, հաճախ անընդունելի ընտրանքների և անցանկալի ու ոչ հեռանկարային զարգացումների առաջ:

Եզրակացության մասում հանրագումարային արժևորումների և եզրահանգումների միջոցով ի մի է բերվել և արժևորվել ՀՀ հասարակական-քաղաքական զարգացման 1991-2001 թթ. ուսանելի պատմափորձը.

1. Անկախության հոչակումով իմբր դրվեց հասարակական-քաղաքական կյանքի արմատական վերափոխմանը, կոմունիստական միակուսակցական մենատիրությունից

⁸³ Սարգսյանի զարգացման գեկույց, Հայաստան 1998, Պետության դերը, Երևան, 1998, էջ 23:

⁸⁴ «Ազգ», N 17, 4 փետրվարի, 1998 թ.:

⁸⁵ Տե՛ս https://hy.wikisource.org/wiki/Ելույթ_Անվտանգության_խորհրդի_ընդլայնված_նիստում:

⁸⁶ Տե՛ս Stephan H. Astourian, From Ter-Petrosian to Kocharyan, pp. 57-59:

ու առանձնաշնորհից քազմակուսակցակցական համակարգին անցումը, որը նոր արժեհամակարգի ձևավորման առումով է կազմական առաջնորդաց էր: Հայաստանը դարձավ այսպես կոչված «ժողովրդավարության կողմակ» անդրկովկայան տարածաշրջանում և այդ ժամանակահատվածը քաղաքական քազմարիկ գործիչների, քաղաքագետների կողմից համարվեց Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման լավագույն փուլը:

2. Կառավարող քաղաքական ուժը՝ ՀՀ-ն որպես առաջատար քաղաքական ուժ և իշխանություն վերանայելով և սկզբունքային-հայեցակարգային վերաձևականացման ենթարկելով իր արտաքին-քաղաքական ռազմավարությունը և իր I համագումարում ամրագրված ծրագրային մարտավարական մոտեցումները, իր իշխանավարման երկրորդ փուլում փոխակերպման ենթարկեց կառավարման սկզբնափուլում ունեցած դիրքորոշումը, որոշելով հայրատական պահանջատիրությունը և Հայոց Մեծ ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման հարցը առաջնահերթություն շրարձնել, գտնելով, որ դա խոշնդրություն է հարեւանների, և մասնավորապես Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, կարծելով, որ այլապես Հայաստանը կմնա մեկուսացված վիճակում և չի բարգավաճ: Այդ նոր հայեցակարգը գործնականում իր որոշակի պատճառաբանվածությունը և արտացոլանքը գտավ ՀՀ համար չարադրել 2020 թ. աշխարհաքաղաքական շրջադարձի արդյունքում առաջացած իրողություններում և քաղաքական իշխանության կողմից ընդունված շրջադարձային բնույթի որոշումներում.

3. Անկախության հրչակմամբ Հայաստանի կառավարությունը համալիր մի շարք՝ գործառույթներ իրականացրեցին՝ անցում կատարելով ժողովրդավարական ձևին՝ նախագահական և խորհրդարանական համակարգին, որը կոմունիստական միակուսական մենատիրությունից հրաժարման առումով և ժողովրդավարացման գործընթացների արմատավորման առումով զգալի առաջնորդաց էր, նոր արժեհամակարգ ժողովրդավար պետության կառուցման ճանապարհին.

4. Վերափոխումների կարևոր արդյունքներից էին արդարադատության համակարգի ուղղությամբ ընթացած գործընթացները, և հատկապես 1996 թ. փետրվարին Սահմանադրական դատարանի ստեղծումը, որն աննախադեպ երևույթ էր ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում.

5. Անկախության հրչակմամբ սկզբնավորվեց Երրորդ հանրապետությունը, ազատականացվեց հասարակական կյանքը, ձևավորվեց քազմակարգությունը, ձևավորվեց ազգային արժեքների նոր համակարգ, առաջարկվեցին իրարամերժ մոտեցումներ ցեղասպանության ճանաչման և Արցախի հարցում.

6. Հրչակագիրը պայմանագրեց նոր Սահմանադրության ընդունումը, հաստատագրեց ՀՀ ինքնիշխանության պատմաֆիսատը իր ողջ լիիրավությամբ.

7. Քազմակուսակցական համակարգի ձևավորումը դարձավ ժողովրդավարական արժեքների չափանիշ, որն այդուհաներձ, ուղեկցվեց արհեստաձին կուսակցությունների, միությունների և դաշինքների ստեղծմամբ, ընտրական գործընթացների խեղարյուրմամբ, կեղծմամբ, տարբեր խավերի ապարագարականացմամբ.

8. Տեղական ինքնակառավարման համակարգի վերափոխումը և նորացումը հանգեցրեց հասարակական-քաղաքական կյանքում բնակչության տարբեր շերտերի ներգրավվածության աստիճանի խորացմանը, ամրապնեց ժողովրդավարական ինստիտուտները, ձևավորեց նոր քաղաքական արժեհամակարգ՝ նպաստելով

ժողովրդավարության գործընթացների ամրապնդմանը Հայաստանի Հանրապէտությունում, միաժամանակ բացահայտելով կումոնիստական մենատիրությունից ինքնիշխան ժողովրդավարական պէտության տրանսֆորմացիայի միշտ բարեփառներ, օբյեկտիվ և սուբյեկտիվ կարգի դժվարություններ ու բացասական շերտանատվածքներ.

9. Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին հիմնարար օրենքը լայն իրավաքաղաքական ուղի բացեց ժողովրդավարական գործընթացների խորացման համար, հասարակության մեջ սերմանելով ժողովրդավարական մտածելակերպը և ժողովրդավարության համակարգի հասարակական ընկալման անհրաժեշտության կարևորագույն տարրեր՝ հնարավորինս հաշվառելով այդ գործում առաջատար ժողովրդավարական արժեքներ կրող եկոպական երկրների փորձը և սեփական երկրի ազգային-քաղաքական ավանդությունները.

10. Հետազոտությամբ միաժամանակ բացահայտվեցին ժողովրդավարական գործընթացներում տեղ գտած հակասությունները, անրավարար փորձը, կուսակցությունների և միուրյունների ստեղծման գործընթացներում տեղ գտած ձևականությունները, արհեստաձին իրական վիճակից չբխող լուծումները, կոնյուկտուրային մոտեցումները, ներքաղաքական հակասությունների շրջանցումը և ոչ օբյեկտիվ գնահատումը, ընդդիմության և իշխանության փոխհարաբերությունների ոչ բավականաշատ օբյեկտիվ գնահատումը, հասարակական կարծիքի ոչ լիարժեքությունը հասարակական-քաղաքական գործընթացներում՝ հասարակության տարրեր խավերի ներգրավվածության մեկնակետից միշտ շարք այլ բացասական երևույթներ.

11. Անկախությամբ պայմանավորված ժողովրդավարական արժեքների ամրապնդման գործընթացում անզնահատելի էր զանգվածային լրատվական միջոցների դերը, որն ուղեկցվեց ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր մամուլի և այլ միջոցների սուր բահմամբ։ Այն թույլ տվեց վերհանել նրանց միջև առկա տարակարծությունների միշտ մեծ շերտ՝ հատկապես իշխանության կազմակերպման, ՀՀ արտաքին-քաղաքական առաջնահերթությունների որոշման և իրատեսական ընտրանքի, ՀՀ սոցիալ-տնտեսական հեռահար ծրագրերի առաջադրման, Հայ դատի և Ցեղասպանության ձանաշման, օրենսդիրի և գործադիր իշխանությունների հարաբերակցության, արցախյան հիմնախնդրի լուծման ոլորտում իրարամերժ, տեղ-տեղ անընդունելի տարրերակների ընտրանքի շուրջ։

12. Հասարակական-քաղաքական կյանքի բնականոն ընթացքը խաթարվեց 1996 թ. ընտրությունների արդյունքների կեղծմամբ, որը ուղեկցվեց առձակատումով և հանգեցրեց 1998 թ. սուր ճգնաժամին և ՀՀ նախագահի հրաժարականին։

13. Հասարակական քաղաքական կյանքի բացասական միտումներն առաջացրին քաղաքական դաշտի երկիրկվածություն, ընտրազանգվածի վստահության կորուստ, որն արդյունարար առումով այդ պատմակիություն ավարտվեց ՀՀ-ին համակարգային առումով հակադիր հայեցակարգ ունեցող քաղաքական ուժի հաղթանակով՝ արմատական իշխանափոխությամբ։ 1999 թ. հոկտեմբերի 27-ն արձանագրեց պետականության ամենամեծ ճգնաժամի փաստը, որն ապակայունացրեց ՀՀ հասարակական-քաղաքական կյանքը, հանգեցրեց լեզվիմության կորստի, շրջափուլային նահանջների, որնց հեռահար արդյունքները արտացոլվեցին ՀՀ զարգացման 2018-2020-ական թթ. ժամանակահատվածում։

14. ՀՀ հասարակական-քաղաքական կյանքը 2000 թ. սահմանագծին նշանավորվեց 1999 թ. ճգնաժամի մասսամբ հաջողված հաղթահարումով, որն իրողություն դարձավ կառավարման կոշտ-ուժային մեթոդների կիրառմամբ, որին կարծես թե այդ պահին այլընտրանք չկար.

15. Հասարակական-քաղաքական կյանքի տեղաշարժերի հետազոտումը բացահայտեց 1990-ական թթ. վերջնամասի ընտրություններում ուժային մեթոդների կիրառմամբ իշխանության հասնելու հանգամանքը՝ տվյալ պահի թելադրանքից բխող կոշտ մեթոդների կիրառմամբ, որոնք անհրաժեշտաբար հնարավոր դարձրեցին այն: Եվ անշուշտ, այդ գործընթացի բացասական միտումները ապագայի և քաղաքական հեռանկարների հետևանքների, և հատկապես հասարակական-քաղաքական կյանքի բնեուայնացման և հանրայնացվածության առումով իրեն սպասեցնել չտվեց.

16. Ըստրական գործընթացները բացահայտեցին ինչպես դրանցով տեղ գտած օրիենտիվ հանգամանքներով պայմանավորված դրական միտումները, այնպես էլ ընտրությունների մասին պատկերացումների փոխակերպումները, ժողովրդավարական արժեքների ամրագրման հետագա հեռանկարների, ուժային-վարչական ռեսուրսների միջոցով քաղաքական դաշտում գերիշխելու և իշխանության դեկին այդ անթույլատրենի ու անընդունելի եղանակներով մնալու քաղաքական ուժերի վստահության մոտիվացիայի և թողած հետևանքների խնդիրները.

17. Եվ վերջապես, ինչպես 1991-1995 թթ. անկախացման առաջին փուլի, այնպես էլ երկրորդ փուլի 1996-2001 թթ. Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի համակարգային շրջադարձերի, 1998 թ. կտրուկ իշխանափոխության գլխավոր ազդակները և կրվանները դարձան 1980-ական թթ. երկրորդ կետում ծնված դարաբարյան համաժողովրդական իրադարձությունները և այդ հոդի վրա առաջացած Արցախ-Ղարաբաղի հիմնահարցը, որոնք իրենց շրջապտույտի մեջ առան ՀՀ ողջ հասարակական-քաղաքական կյանքը և անկախությամբ ազատականացած հայ ժողովրդի ստվար հատվածներին: Հենց դրանք կայամանավորեցին և կանխորոշեցին հետագա պատմաբնագրի բոլոր կարևորագույն փոխակերպումների և վերածնությունների հետագա հնարավոր միտումները և ուղղվածությունը՝ ունենալով թե՛ դրական և թե՛ շատ բացասական հետևանքներ ու ընդգրկումներ ՀՀ թերքին և թե՛ հատկապես արտաքին-քաղաքական առաջնահերթությունների ձևավորման ու որոշման գործում:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրապարակումները.

1. ՀՀ հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեությունը (1990-2001 թթ.), «Պատմություն և քաղաքականություն», 2019, N 2 (3), էջ 95-114:

2. Հայաստանի Երրորդ հանրապետության հոչակման գործընթացի սկիզբը, «Պատմություն և քաղաքականություն», 2019, N 4 (5), էջ 61-71:

3. Նախազահական և խորհրդարանական համակարգեր ձևավորումը 1991-1998 թթ., «Մերուպ Մաշտոց համալսարանի լրատու», 2019, N 2 (22), էջ 114-121:

4. Կուսակցությունների ձևավորումը ՀՀ-ում 1990-ական թթ., «Հայագիտական հանդես», 2020, N 2 (47), էջ 152-163:

5. ՀՀ ժողովրդավարացման և բազմակուսակցական համակարգի ստեղծումը, «Հայագիտական հանդես», 2020, N 3 (48), էջ 140-149:

6. Պետական կառավարման ինստիտուտների ձևավորման գործընթացը ՀՀ-ում (1990-ական թթ. I կես), «Հայագիտական հանդես», 2021, N 2 (51), էջ 15-167:

СИМОНЯН ВАРДУИ ВРУЙРОВНА

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ЖИЗНЬ РА В 1991-2001 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

**Защита состоится 26-го декабря 2023 г. в 15⁰⁰ часов на заседании специализированного совета по История Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА
(0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).**

РЕЗЮМЕ

С распадом СССР и с провозглашением независимости в 1991 г была заложена основа Третьей Республики Армении. С провозглашением независимости были заложены основы для радикального преобразования общественно-политической жизни, переход от коммунистической однопартийной монополии и привилегий к многопартийности, либерализации и плюрализму, а также формирования национальных ценностей в области культуры, религии, языка в целом. А самое главное- в Декларации нашло место то, что РА поддерживает признание Геноцида армян в Османской Турции и в Западной Армении в 1915 г., что можно считать большим успехом. Однако несмотря на то, что Армянское Общенациональное Движение (АОД) в начале Карабахского движения было первоходцем борьбы за Арцах, и в перемирии 1994 г. подтвердил эту победу, которое имело шаткое основание, что и вынудило его на более позднем этапе преобразовать свою концепцию, исходя из принуждения новых реалий. Армянское общенациональное движение как ведущая политическая сила и власть, перекраивая свою внешнеполитическую стратегию и тактические подходы и исходя из новых принуждений стремительных геополитических развитии, решило не ставить притязания армян в приоритет, посчитав, что это препятствует установлению добрососедских отношений с соседями, считая, что иначе Армения останется изолированной и не будет процветать. Важнейшим правовым документом, утвердившим новый путь к независимости, была Декларация независимости, документ, состоящий из 12 пунктов, в котором были заложены как основы будущего Основного Закона- Конституции, а также новые ориентиры общественно-политического, экономического и культурного развития. В Декларации было утверждено, что Армения является суверенным государством, наделенным верховенством государственной власти, полноправием независимости, что положило конец коммунистическому периоду, и сбыли созданы предпосылки для воплощения в жизнь десятилетиями ожидаемой, и игнорированной советской властью Арцахской проблемы, что стало толчком к 1988 г. для нового народного пробуждения, рожденного на основе воссоединения Нагорного Карабаха с матерью-Арменией.

Немаловажным было и то, что в стране был заложен фундамент для формирования социальных и административных ценностей, свобод прав человека, совести, печати, религии. Создание общественных организаций и политических партий и возможность свободно действовать создали в Республике Армения более или менее здоровую и непринужденную атмосферу различных политических взглядов и плюрализма. После провозглашения независимости Республика Армения предприняла шаги и осуществила переход к

президентской и парламентской системам, что явилось значительным прогрессом в плане демократизации. Общим итогом, совокупностью правовых процессов демократизации общественно-политической жизни Республики Армения следует считать Первую Конституцию новой независимой страны, что было результатом долгих дискуссий и разногласий. Однако важно, что в итоге в условиях либерализации общественно-политической жизни Армении была принята первая Конституция независимой Армении, впервые установившая справедливые и законные права армянского народа с точки зрения международного признания Геноцида армян, а также утверждения ценностей демократии, необратимого перехода от периода однопартийной монополии к свободомыслящей и плюраллистической системе ценностей и многопартийности, что явилось качественно другим этапом нового общественно-политического исторического перехода армянского народа.

Тем не менее, установление многопартийности в Республике Армения также выявило, что этот процесс сопровождался созданием множества искусственных партий, союзов, целью которых во многих случаях были не общегосударственные национальные интересы, а борьба за власть, что осложнило внутриполитическую ситуацию в стране, способствовало нестабильности, что в конечном итоге погубно влияло на решение внешнеполитических стратегических вопросов РА, тем самым обесценивая роль и призвания партийного фактора в различных слоях общества. В то же время, непредвзятая оценка опыта накопленного за эти годы общественно-политической жизни показала недостаточность сформированности политической культуры и парламентаризма, которые сделали реальностью проявления клановых интересов в Армении, эгоистичные устремления политических групп в совокупности, что на этой основе имея цель проникнуть в законодательные и исполнительные структуры власти, которая была представлена различным слоям народа и до сих пор представляется под покровом многопартийности. И в конце концов, либерализация политического поля в такой малонаселенной стране, как Армения, наряду с позитивом, выявила немаловажное обстоятельство, что обилие многих партий, союзов сыграло тенденциозную роль в политическом выборе избирателей в избирательном процессе и существенным образом повлияло на процессы деполитизации широких масс армянского народа, а также явной дискредитации этих политических сил, партий и союзов в глазах народа, что ярко проявилось в событиях 2018-2020 гг. В свою очередь все это оттеснило на второй план ответственность партийно-политических сил за развитие и интересы безопасности страны практически во всех сферах: внешнеполитической, военно-экономической, социальной и т.д.

VARDUI VRUYR SIMONYAN

SOCIAL-POLITICAL LIFE RA IN 1991-2001

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of «History of Armenia» 07.00.01

The Defense of the Dissertation will be held on December 26, at 1400 at the Session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

With the collapse of the USSR and in 1991 with the declaration of independence, the Third Republic of Armenia was initiated. With the declaration of independence, the foundation was laid for the radical transformation of social and political life, from the communist one-party monopoly and privilege to the multi-party system, liberalization and pluralism, and the formation of culture, religion, language, and national values in general, and the most important thing was found in the declaration. The fact that RA supports the 1915 recognition of the Armenian Genocide in Ottoman Turkey and Western Armenia, which can be considered the greatest success, despite the fact that the ANM was the pioneer of the struggle for Artsakh at the beginning of the Karabakh movement, and in 1994 Zinadar secured a victory, which, however, had shaky foundations, which forced him to transform his concept at a later stage based on the compulsion of new realities. The Armenian National Movement (ANM) as a leading political force and power, reshaping its foreign policy strategy and tactical approaches, and based on the new constraints of the rapid geopolitical developments, decided not to make the claim of Armenians a priority, finding that it hinders the establishment of neighborly relations with its neighbors, believing that Armenia will remain isolated and will not prosper.

The declaration was the most important legal document that confirmed the road to independence, in which the document consisting of 12 points laid down both the future basic law, the Constitution, and a new path of social-political, economic and cultural developments. The declaration stated that Armenia is a sovereign state, endowed with the supremacy of the state power, the full right of independence, which ended the communist period, and created the prerequisites for bringing to life the Artsakh problem, which was awaited for decades, but was violated by the Soviet government, which became the impetus for 1988, for a new popular awakening born on the basis of the reunification of the popular Nagorno-Karabakh with mother Armenia. It was also important that the foundation was laid in the country for the formation of social and administrative values, freedom of human rights, conscience, press, and religion. The formation of non-governmental organizations and political parties and the opportunity to operate freely created a more or less healthy and relaxed

atmosphere of different political views and pluralism in the Republic of Korea. After the declaration of independence, the Republic of Armenia took steps and made a transition to the presidential and parliamentary systems, which was a significant progress in terms of democratization. The first Constitution of the newly independent country, which is the result of long discussions and disagreements, should be considered the sum total of the legal processes of popularization of the public and political life of the Republic of Armenia. However, it was important that in the end, the first Constitution of independent Armenia was adopted for the first time in the context of the liberalization of the social and political life of Armenia, which established the fair and legal rights of the Armenian people in terms of the international recognition of the Armenian Genocide. Affirmed the values of democracy, the irreversible transition from the period of one-party monopoly to a free-thinking and pluralist value system and a multi-party system, which was a qualitatively new stage in the new socio-political historical transition of the Armenian people. Nevertheless, the establishment of a multi-party system in the Republic of Armenia also revealed that this process was accompanied by the creation of many artificial parties, unions and alliances, the goal of which in many cases were not national interests, but the struggle for power, which complicated the internal political situation. In the country, contributes to instability, which in the end affects the solution of RA's foreign-political strategic issues, thereby devaluing the role and rank of the party factor in different layers of society.

At the same time, the unbiased evaluation of the experience accumulated during those years of social and political life showed the insufficient establishment of political culture and parliamentarism, which made the manifestations of clan interests a reality in Armenia, the self-centered aspirations of political groups, and the purpose of penetrating the legislature and a system of executive power, which was presented to different classes of the people and is still presented under the guise of multi-partyism. And in the end, the liberalization of the political field in a country with a small population like Armenia, along with the positive, revealed an important circumstance that the abundance of many parties, unions, and alliances in the electoral process played a biasing role in the electorate's political choice and essentially contributed to Armenian progress, the depoliticization of the broad classes, as well as the clear discrediting of those political forces, parties and alliances in the eyes of the people, which was clearly demonstrated in 2018-2020. In events, in turn, the responsibility for the country's development and security interests in almost all spheres, foreign-political, and for the responsibility in almost all spheres: foreign-political, military-economic, social, etc.